Մինչև այդ դաշնագրի կնքումը Շահթախթ—Զուլֆա երկաթուղին պիտի բանեցուէր Հայաստանի երկաթուղային վարչութեան կողմից*):

Սեպտ. 14-ին վերադարձաւ Շանթի պատուիրակութիւնը, և միայն հոկտ. 11-ին Երևան եկաւ Լեգրանը՝ պատուիրակութեան բոլոր անդամների հետ: Նրա պատուիրակութիւնը բաղկացած էր 47 հոգուց, որոնց մէջ էին և Սահ. Տէր-Գաբրիէլեանը, Աշ. Յովհաննիսեանը: Հայաստանի կառավարութիւնը ցոյց տուեց նրան փայլուն ընդունելութիւն: Լեգրանին կայարանում ողջունեցին զինւ. նախ. օգնական զօր. Հախվերդեանը, արտաքին գործոց նախ. օգնականը, Շանթի պատուիրակութեան անդամ Հ. Տէրտէրեանը և ուրիշներ: Երբ Լեգրանը դուրս եկաւ վագոնից, զինուորական երաժշտախումբը նուագեց «Ինտերնասիոնալը», և զօրքերը պատուի կեցան: Լեգրանը անցաւ զօրաշարքի առջևով և ողջունեց զինուորներին: Ու հանդիսաւորութեամբ անցաւ քաղաք և նոյն օրն և եթ տեսակցութիւն ունեցաւ վարչապետ Հ. Օհանջանեանի հետ:

Յաջորդ օր սկսուեցին բանակցութիւնները Լեգրանի և Շանթի միջև:

Հոկտ. 13-ին Լեգրանը ներկայացրեց մի շարք պահանջներ, որոնցից գլխաւորներն էին 1) հրաժարուել Սևրի դաշնագրից, 2) թոյլ տալ խորհրդային զօրքերին, իրենց ռազմամթերքով, անցնել Հայաստանի երկաթուղիներով ու խճուղիներով՝ միանալու համար Մուստաֆա Քեմալի զօրքերին, դաշնակիցների դէմ կռուելու նպատակով, 3) սահմանավէճը Հայաստանի և հարևանների միջև լուծել խորհրդային Ռուսաստանի միջնորդութեամբ:

Հայաստանի պատուիրակութիւնը վճռականապէս մերժեց ընդունել առաջին կէտը, իսկ միւս բոլոր կէտերի վերաբերմամբ կայացաւ համաձայնութիւն և կազմուեց դաշնագրի նախագիծ, որով 1) Խորհրդ. Ռուսաստանը ճանաչում էր Հայաստանի անկախութիւնը և ներքին անձեռնմխելիութիւնը, Հայաստանի մէջ պիտի մտնէր և Զանգեզուրը, իսկ Ղարաբաղի և Նախիջևանի վիճակը պիտի որոշուէր իրաւարարութեամբ. 2) Խորհրդ. Ռուսաստանը իսկոյն պէտք է միջամտէր՝ կասեցնելու համար պատերազմը Հայաստանի և Թուրքիայի միջև. 1914թ. սահմանի վրա պէտք է ստեղծուէր չէզոք գօտի և

---

*) Բնորոշ է, որ օգ. 10-ի համաձայնութիւնը ահագին դժգոհութիւն առաջ բերեց Թիֆլիսի դաշնակից ներկայացուցիչների մէջ: Անգլիայի ներկայացուցիչ կոմանդոր Լիւքը մեղադրում էր հայերին, որ Հայաստանը երես է դարձնում դաշնակիցներից և այլևս չպիտի կարողանայ օգտուել նրանց օգնութիւնից, իսկ Ֆրանսայի բարձր կոմիսար դը Մարտէլը գտնում էր, որ հայերը անցնում են դաշնակիցների թշնամիների բանակը: Դը Մարտէլի դժգոհութիւնը մեծ էր և այն պատճառով, որ Հայաստանի կառավարութիւնը մերժել էր առնել Ֆրանսայի վաշխառուական պայմաններով առաջարկած զէնքերն ու ռազմամթերքը: Օգ. 31-ին Երևան գնաց կոմ. Լիւքը, ուր ընդունուեց հանդիսաւորութեամբ, և կառավարութեան հետ շփուելով ու դրութեան տեղն ու տեղը ծանօթանալով՝ համոզուեց, որ իր կասկածներն անհիմն են: Նոյն ժամանակ Լիւքը Հայաստանի կառավարութեան ներկայացրեց տնտեսական պայմանագրի մի նախագիծ՝ Հայաստանի նաւահանգիստները և երկաթուղիները Անգլիային յանձնելու իմաստով և առաջարկեց երեք օրայ ընթացքում ստորագրել: Հայաստանի կառավարութիւնը մերժեց ստորագրել: